«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ
POS ծառայության պայմաններ

Հաստատված է՝
«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ տնօրինության
11.09.2024թ. թիվ 38 որոշմամբ

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Բանկ՝ «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ,

Պայմաններ՝ Բանկի՝ POS ծառայության սպասարկման պայմաններ,

Վճարային համակարգ՝ վճարային քարտերը սպասարկող վճարային համակարգեր (VISA, MasterCard, ArCa և այլն),

POS տերմինալ՝ անկանխիկ գործարքներ կատարելու համար նախատեսված էլեկտրոնային սարք, **Սարքավորում՝** POS տերմինալ, բջջային հեռախոս կամ Հաշվիչ դրամարկղային մեքենա (այսուհետ՝ ՀԴՄ), որը նախատեսված է Առևտրի և սպասարկման կետում, քարտով, ինչպես նաև ինտերնետային կայքի կամ բջջային հավելվածի միջոցով անկանխիկ վճարումների ընդունումն ապահովելու համար, այդ թվում Բանկի՝ վճարումների ընդունումն ապահովելու համար նախատեսված հավելվածի միջոցով,

POS ծառայություն (նաև՝ Ծառայություն) ՝ Բանկի կողմից տրամադրվող ծառայություն, որով Բանկն ապահովում է Առևտրի և սպասարկման կետում ապրանքների վաճառքի և (կամ) ծառայությունների մատուցման դիմաց քարտով անկանխիկ վճարումների ընդունումը և դրանց հաշվարկների կատարումը, այդ թվում Ինտերնետ էքվայրինգ ծառայություն,

Ինտերնետ էքվայրինգ ծառայություն (նաև՝ Ծառայություն)՝ Բանկի կողմից տրամադրվող ծառայություն, որով Բանկն ապահովում է Առևտրի կետի կողմից իր ինտերնետային կայքի կամ Բանկի բջջային հավելվածի միջոցով ապրանքների վաճառքի և (կամ) ծառայությունների մատուցման դիմաց վճարում,

Բջջային հավելված՝ Byblos FlexiPos հավելված, կամ ապագայում դրան փոխարինող կամ լրացնող Բանկի հավելված, որը հնարավորություն է տալիս հեռախոսի միջոցով ապրանքների վաճառքի և (կամ) ծառայությունների մատուցման դիմաց ընդունել վճարումներ,

Հավաստագրման կենտրոն՝ «Արմենիան Քարդ» ՓԲԸ կամ Բանկ,

Հավաստագրում՝ գործարքի կատարման համար վճարային քարտը թողարկող բանկի թույլտվությունը ստանալու գործընթաց,

Քարտ՝ անկանխիկ վճարում կատարելու վճարային գործիք,

Ընկերություն՝ ապրանքների վաճառքով և (կամ) ծառայությունների մատուցմամբ զբաղվող կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր,

Առևտրի և սպասարկման կետ՝ Ընկերության առևտրի կամ սպասարկման կետ, որտեղ իրականացվում է Ընկերության տնտեսական գործունեությունը,

Սակագներ՝ Բանկի սակագները իրավաբանական անձ/անհատ ձեռնարկատեր հաճախորդների համար,

Քարտապան՝ անձ, որը թողարկող բանկի հետ կնքել է վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագիր,

Գործարք՝ Առևտրի և սպասարկման կետում քարտով, ինչպես նաև ինտերնետային կայքի կամ բջջային հավելվածի միջոցով կատարված գործարք:

1. Պայմանագրի կնքում և ծառայության հիմնական պայմաններ

1.1. Սույն Պայմանները սահմանում են POS ծառայությունից օգտվող Ընկերության Առևտրի և սպասարկման կետ(եր)ի և Բանկի՝ որպես POS ծառայություն մատուցողի իրավահարաբերությունները: Ընկերությունը իր Առևտրի և սպասարկման կետ(եր)ում վճարումներ ընդունում է Վճարային համակարգերի քարտերով, իսկ Բանկը Հավաստագրման կենտրոնից ստացված Ընկերության Առևտրի և սպասարկման կետ(եր)ի կողմից ներկայացված պլաստիկ քարտերի անդորրագրերի (սլիպերի) կամ էլեկտրոնային ֆայլերի հիման վրա իրականացնում է ընդունված վճարումների փոխհատուցում: Ծառայությունների համար Սակագներով նախատեսված վճարները Բանկի կողմից հաշվանցվում են փոխհատուցման ենթակա գումարներից, եթե այլ բան նախատեսված չէ Ընկերության և Բանկի համաձայնությամբ:

1.2. Պայմանները կիրառելի են նաև Առևտրի և սպասարկման կետ(եր)ում բանկային պլաստիկ քարտերով ծառայություններ իրականացնելու նպատակով այնտեղ տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով սպասարկվող POS տերմինալների, հավելվածների և ինտերնետային կայքի միջոցով կատարվող անկանխիկ /քարտային/ վճարումների միջոցով Ծառայությունից օգտվող Ընկերությունների նկատմամբ:

1.3. Սույն Պայմանների ներքո կողմերի միջև իրավահարաբերությունները ծագում են Բանկի և Ընկերության միջև Ծառայությունների հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից կամ հավելվածի ակտիվացման, որը այդ պահից, Պայմանների և Սակագների հետ միասին, համարվում է Կողմերի միջև կնքված պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

1.4. Բանկը Պայմանագրի կնքման օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է Ծառայության ակտիվացման համար անհրաժեշտ գործողությունները, եթե Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն ի հայտ չեն եկել Ծառայության տրամադրումը արգելող հանգամանքներ: Սույն կետում նշված ժամկետը կարող է երկարաձգվել՝ կախված

Բանկի կողմից համապատասխան կազմակերպություններից անհրաժեշտ արտոնագրերի և այլ տեխնիկական կարգավորումների ստացման ժամկետներից:

1.5. Պայմանները և Սակագները, այդ թվում միջնորդավճարների չափերը մշտապես հասանելի են Բանկի տարածքում և Բանկի ինտերնետային կայքում: Դրանք կարող են միակողմանիորեն փոփոխվել Բանկի կողմից: Պայմաններում և Սակագներում կատարված փոփոխությունների մասին Բանկը Ընկերությանը ծանուցում է մինչև դրանց ուժի մեջ մտնելը՝ Բանկի տարածքում դրանք հասանելի դարձնելու, նաև ինտերնետային կայքում հրապարակելու միջոցով, ինչպես նաև Ընկերությանը փոփոխությունը տեղի ունենալուց առնվազն յոթ աշխատանքային օր առաջ ծանուցումներ ուղարկելու միջոցով՝ Ընկերության համար սահմանված հաղորդակցման եղանակով:

1.6. Բանկն ապահովում է Առևտրի և սպասարկման կետում կատարված քարտերով գործարքների հավաստագրումը իր աշխատանքային ժամերին, ինչպես նաև գործարքների գումարները անկանխիկ փոխանցում է Առևտրի և սպասարկման կետին Հավաստագրման կենտրոնից գործարքների հաստատումը ստանալուց հետո 2-ից (երկու) 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝ գանձելով միջնորդավճար՝ Բանկի և Առևտրի սպասարկման կետի միջև համաձայնեցված և/կամ Բանկի կայքէջում հրապարակված Սակագներով: Բանկը փոխանցում է այն գործարքների գումարները, որոնք կատարվել են սույն Պայմանների պահանջներին համապատասխան:

1.7. Սարքավորման տեղադրման կամ Ծառայության ակտիվացման ժամանակ Բանկ կարող է Առևտրի և սպասարկման կետին տրամադրել Ծառայություններից օգտվելու ուղեցույց, և վերջինս պարտավորվում է առաջնորդվել այդ ուղեցույցի պահանջներով:

2. Բանկի և Ընկերության իրավունքները և պարտականությունները

2.1.Բանկն իրավունք ունի՝

2.1.1. Կատարվելիք և փոխհատուցման ենթակա գումարներից, իսկ անհնարինության դեպքում նաև Ընկերության՝ Բանկում բացված այլ հաշիվներից, անակցեպտ կարգով իրականացնել գանձում այն գումարների չափով, որոնք Վճարային համակարգից ստացված պահանջի հիման վրա գանձվել են Բանկից անվավեր էլեկտրոնային գործառնությունների կատարման հետևանքով և/կամ գանձվել են սույն Պայմանների դրույթներին չհամապատասխանող էլեկտրոնային գործառնությունների ձևակերպման հետևանքով:

2.1.2. Միակողմանիորեն փոփոխել Առևտրի և սպասարկման կետին տրված գործառնությունների ընդհանուր սահմանաչափերը, այդ մասին 3 (երեք) աշխատանքային օր առաջ տեղյակ պահելով Ընկերությանը:

2.1.3. Սահմանել ՀԴՄ սարքի միջոցով ամսական նվազագույն շրջանառության գումար՝ համաձայն Սակագների, իսկ սույն պայմանը չկատարելու դեպքում՝ տույժ ըստ Սակագների:

2.1.4. Սակագների համաձայն սահմանված ամսական նվազագույն շրջանառության գումարը Առևտրի կետի կողմից 3 (երեք) ամիս անընդմեջ չապահովելու, ինչպես նաև Պայմաններով սահմանված պահանջներից որևէ մեկը չպահպանելու կամ ոչ պատշաճ պահպանելու պարագայում հետ պահանջել ՊՈՍ տերմինալը/ ՀԴՄ սարքը, եթե այն տրամադրվել է Բանկի կողմից կամ ապաակտիվացնել ծառայությունը:

2.1.5. Հրաժարվել ծառայություն մատուցելուց, եթե Ընկերությունը չի համապատասխանում Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին, այդ թվում գտնվում է ACRA-ի կամ MasterCard-ի սեւ ցուցակներում, առկա է կասկած Ընկերության գործունեության օրինականության վերաբերյալ և այլ հանգամանքներ:

2.2. Բանկը պարտավոր է՝

2.2.1. Ապահովել Առևտրի և սպասարկման կետին տրամադրված POS-տերմինալների տեխնիկական սպասարկումը:

2.2.2. Կազմակերպել Հաճախորդի Առևտրի և սպասարկման կետից էլեկտրոնային ֆայլերի/սլիպերի ստացումը ապահովել ծառայության թարմացումներ Հավաստագրման կենտրոնի կողմից:

2.3. Ընկերությունը իրավունք ունի՝

2.3.1. Պահանջել Բանկից ապահովել Սարքավորումները Պայմանագրով սահմանված ժամկետներում:

2.3.2. Դադարեցնել Պայմանագիրը, այդ մասին նախապես 5(հինգ) աշխատանքային օր առաջ ծանուցելով Բանկին և վերադարձնելով տրամադրված Սարքավորումները:

2.4. Ընկերությունը պարտավոր է՝

2.4.1. Պահպանել քարտերով կատարված գործարքների անդորրագրերի (սլիպ) պատճենները, այդ թվում էլեկտրոնային անդորրագրերը՝ 1 (մեկ) տարի՝ սկսած գործարքի կատարման օրվանից՝ պահպանելով դրանց ամբողջականությունը, և Բանկի առաջին իսկ պահանջով 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել դրանք Բանկին:

2.4.2. Իր հաշվին Առևտրի և սպասարկման կետին հատկացնել համապատասխան կապի գծեր և կատարել դրանց օգտագործման և շահագործման համար նախատեսված բոլոր վճարումները:

2.4.3. Բանկին տրամադրել քարտերով իրականացված գործառնությունների սլիպերը և պատշաճ կարգով ձևակերպված Առևտրի և սպասարկման կետի հաշվետվությունները՝ ոչ ուշ քան գործառնությունն իրականացնելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Գործառնությունների էլեկտրոնային մատյանի (փաթեթի) ուղարկումը Հավաստագրման կենտրոն կատարվում է ավտոմատ ռեժիմով կամ սպասարկող անձի կամ Առևտրի և սպասարկմանի ղեկավարի կողմից ոչ պակաս 24 ժամը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում՝ գործառնության պահին:

2.4.4. Առևտրի և սպասարկման կետի կողմից ծառայությունների, աշխատանքների, ապրանքների տրամադրման վայրերում տեղադրել և փակցնել Բանկի և ԱրՔա, MasterCard, VISA վճարային համակարգերի լոգոտիպերը արտացոլող գովազդային նյութերը:

2.4.5. Համագործակցել վճարային համակարգի պահանջով իրականացվող՝ քարտային տվյալների գաղտնիության խախտման կասկածելի դեպքերի հետաքննություն (forensic investigation) իրականացնող կազմակերպությունների հետ՝ հետաքննության ամբողջ ընթացքում:

2.5. Առևտրի կետն իրավունք չունի տրամադրել քարտապաններին կանխիկ գումար՝ կատարված անկանխիկ գործարքների դիմաց: Քարտով կատարված գործարքը անվավեր ճանաչվելու/չեղարկվելու դեպքում գործարքի գումարը վերադարձվում է քարտին անկանխիկ եղանակով:

3. Ինտերնետ էքվայրինգ ծառայության հատուկ պայմաններ

Ինտերնետ էքվայրինգ ծառայությունը Բանկի կողմից տրամադրվող ծառայություն է, որով Բանկն ապահովում է Առևտրի կետի կողմից իր ինտերնետային կայքի կամ Բանկի բջջային հավելվածի միջոցով ապրանքների վաճառքի և (կամ) ծառայությունների մատուցման դիմաց վճարում:

3.1. Ինտերնետային կայքով վճարումների ընդունման հատուկ պայմաններ

3.1.1. Ինտերնետային կայքով վճարումների ընդունման ծառայության ներքո Ընկերությանը տրվում է հնարավորություն վճարումներ ընդունել ՀՀ դրամով և տվյալ պահին Ծառայության ներքո Բանկի կողմից առաջարկվող այլ արժույթով: Ընկերությունը պարտավորվում է Ծառայությունից օգտվել «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: Գործարքները արտարժույթով իրականացնելու հնարավորության դեպքում ինտերնետային կայքում պետք է ունենալ տեխնիկական լուծում, որով ՀՀ տարածքում իրականացվող գործարքները կկատարվեն միայն ՀՀ դրամով:

3.1.2. Եթե Առևտրի կետն իրականացնում է ապրանքների վաճառք՝ առաքման միջոցով կամ ապրանքը Առևտրի կետի տարածքից ստանալու (in-store pick up) տարբերակով, գործարքի հիմնավորող փաստաթուղթը պետք է կազմված լինի առնվազն անգլերենով և պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

- Ապրանքի նկարագրություն,
- Ապրանքի առաքման / ստացման հասցե,
- Ապրանքի առաքման/ստացման ամսաթիվ, ժամ,
- Ստացողի անուն, ազգանուն,
- Ստացողի ստորագրություն,

- Բանկային քարտի համարի վերջին 4 նիշը, որով իրականացվել է ապրանքի դիմաց վճարումը:

Եթե վճարողը և ստացողը տարբեր անձինք են, խնդրահարույց գործարքների, այդ թվում՝ հետագայում երրորդ անձի կողմից Բանկին գումարի վերադարձման պահանջ ներկայացվելու դեպքում, բացի սույն կետում նշված տեղեկատվությունից, անհրաժեշտ է նաև վճարողի ծանուցումը կամ վերջինիս հետ հաղորդակցության հիմքերը, որով նա Առևտրի և սպասարկման կետին հայտնում է, թե ով է ստանալու ապրանքը և/կամ տրամադրում է այդ անձի տվյալները:

3.1.3. Առևտրի կետը պետք է ունենա գործարքների իրականացման ինտերնետային կայքի և Բանկին ներկայացված՝ Առևտրի կետի կողմից գործածվող ինտերնետային կայքերի դոմենների նկատմամբ իրավասությունները հավաստող փաստաթուղթ, որը պետք է ներկայացվի Բանկ՝ վերջինիս առաջին իսկ պահանջի դեպքում:

3.1.4. Ինտերնետային կայքում հղումները պետք է լինեն իրական և պարունակեն իրական տվյալներ մատուցվող ծառայությունների վերաբերյալ, ինչպես նաև չուղղորդեն այլ կայքեր, որոնք խախտում են Պայմանները:

3.1.5. Քարտապանի տվյալների և գործարքների տվյալների պաշտպանության նպատակով գործարքները պետք է իրականացվեն վճարային քարտերի տվյալների անվտանգության PCI DSS ստանդարտին և վճարայյին համակարգերի՝ տվյալների պաշտպանության այլ պահանջներին համապատասխան:

3.2. Բանկի Բջջային հավելվածի օգտագործման հատուկ պայմաններ

3.2.1. Առևտրի կետի նախընտրությամբ POS ծառայությունը կարող է տրամադրվել նաև Բանկի Byblos FlexiPos հավելվածի միջոցով:

3.2.2. Պայմանագրի գործողության ընթացքում ըստ անհրաժեշտության POS ծառայության տրամադրման եղանակը, ինչպես նաև Սարքավորման տեսակը և/կամ քանակը կարող է փոփոխվել Կողմերի համաձայնությամբ:

3.2.3. Սարքավորումը Առևտրի կետին տրամադրում է Բանկը, Հաճախորդի ցանկության դեպքում, անհատույց օգտագործման իրավունքով, որի վերաբերյալ կազմվում է հանձնման ընդունման ակտ կամ հանձնումը հավաստող այլ փաստաթուղթ:

3.2.4. Byblos FlexiPos տարբերակի համար Առևտրի կետը պետք է իրեն պատկանող շարժական սարքում ներբեռնի Բանկի Byblos FlexiPos հավելվածը, որը գործում է միայն Android օգտատերերի՝ Android 8.1 և բարձր օպերացիոն համակարգերով սարքերի համար, որոնք ունեն NFC (Near-field communication) տեխնոլոգիայի կիրառման հնարավորություն:

3.2.5. Առևտրի կետը իրավունք չունի ձևափոխել և/կամ տրամադրել Բանկի կողմից տրամադրված Սարքավորումը, Բանկի Բջջային հավելվածը, համակարգչային ծրագրերը,

փաստաթղթերը և այլ նյութերը երրորդ անձանց, չփոխանցել այն ենթավարձակալության, չթույլատրել այլ անձանց օգտագործել այն:

3.2.6. Սարքավորումը, Բջջային հավելվածը պետք է օգտագործվեն միայն տվյալ Առևտրի կետում վաճառքների համար: Առևտրի կետն իրավունք չունի վճարման համար ներկայացնել այնպիսի գործարքներ, որոնք մեկ այլ առևտրի կետում կատարված վաճառքների արդյունք են:

3.2.7. Առևտրի կետը Սարքավորման կամ Byblos FlexiPos հավելվածի խափանման, ինչպես նաև Byblos FlexiPos հավելվածը պարունակող սարքի կորստի, Byblos FlexiPos -ի ծրագրային մուտքի տվյալները երրորդ անձանց հասանելի դառնալու դեպքերում անմիջապես տեղեկացնում է Բանկին այդ մասին և անմիջապես կասեցնում է քարտերի սպասարկման գործընթացը:

4. Ոչ իրավաչափ և բողոքարկված գործարքներ

4.1. Սույն Պայմանների ներքո ծագած իրավահարաբերությունների ընթացքում Բանկն իրավունք ունի կատարել քարտային գործարքների մոնիտորինգ՝ վճարային համակարգերի պահանջների և Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն:

4.2. Ընկերությունը չպետք է իրականացնի ՀՀ օրենսդրության և վճարային համակարգերի կանոնների համաձայն արգելված կամ անօրինական գործարքներ: Նման գործարքների բացահայտման դեպքում Ընկերության նկատմամբ կարող է կիրառվել տուգանք՝ համապատասխան վճարային համակարգի կողմից սահմանված կարգով և չափով, ինչպես նաև ամբողջովին դադարեցնել Ընկերության հետ գործարար հարաբերությունները, ընդ որում կարող է դիտարկվել տուգանք չկիրառելը կամ մասամբ կիրառելը, եթե Ընկերությունը նախքան վճարային համակարգից խախտման վերաբերյալ ծանուցում ստանալը կարգավորել է խնդիրը:

4.3. Բանկը կարող է սահմանափակել Ընկերության բանկային հաշվի միջոցների տնօրինումը՝ տվյալ տեսակի բողոքարկման պարզաբանման համար վճարային համակարգերի կանոններով սահմանված ժամանակահատվածով, բայց ոչ ավել քան 6 (վեց) ամսով, եթե Առևտրի և սպասարկման կետում քարտով վճարում կատարած անձը բողոքարկում է տվյալ կետում գործարք կատարելու փաստը:

4.4. Բանկն իրավունք ունի Ընկերության Առևտրի և սպասարկման կետի կատարվելիք և փոխհատուցման ենթակա գումարներից անակցեպտ կարգով իրականացնել գանձում այն գումարների չափով, որոնք վճարային համակարգից ստացված պահանջի հիման վրա գանձվել են Բանկից անվավեր սլիպերի/էլեկտրոնային գործառնությունների կատարման հետևանքով և/կամ գանձվել են սույն պայմանագրի դրույթներին չհամապատասխանող սլիպերով/էլեկտրոնային գործառնությունների ձևակերպման հետևանքով:

4.5. Ընկերությունը պարտավորվում է Բանկին հատուցել այն ծախսերը, որոնք Բանկը կրում է բողոքարկված գործարքի հետ կապված՝ Ընկերության պահանջով վճարային համակարգերի կանոններին համապատասխան բողոքարկման գործընթացի արբիտրաժային փուլին մասնակցելու դեպքում:

4.6. Ընկերությունն իրավունք չունի ընդունել քարտով վճարում, եթե տիրապետում է կամ կարող է տիրապետել տեղեկատվության այն մասին, որ գործարքը զեղծարար/ոչ իրավաչափ է կամ կատարվում է առանց քարտապանի համաձայնության/թույլտվության:

4.7. Ընկերությունն իրավունք չունի ընդունել վճարում այնպիսի գործարքի համար, որը նախկինում բողոքարկվել է քարտապանի կողմից:

4.8. Ընկերությունը պարտավորվում է Սարքավորումներով կասկածելի կամ ոչ իրավաչափ գործարքի հայտնաբերման կամ նման կասկածի դեպքում անմիջապես հայտնել այդ մասին Բանկին:

4.9. Բանկը կարող է անվավեր համարել կամ չընդունել այն գործարքները, որոնք չեն ստացել հավաստագրում Բանկի կամ Արմենիան Քարդ պրոցեսինգային կենտրոնի կողմից սահմանված պահանջների և կանոնների համաձայն և /կամ չեն ներկայացվել Բանկ գործարքի կատարումից հետո 5 (հինգ) օրյա ժամկետում:

5. Պայմանագրի կասեցում և լուծում

5.1. Բանկն իրավունք ունի ժամանակավորապես կասեցնել Ծառայության տրամադրումը՝ սույն Պայմաններով սահմանված կարգով այդ մասին ծանուցելով Առևտրի կետին, վերջինիս կողմից սույն Պայմանների խախտման, այդ թվում՝ Բանկի նկատմամբ պարտավորությունները ժամանակին չվճարելու դեպքում, կամ ողջամիտ կասկած առաջանալու դեպքում, որ Սարքավորումներով Ընկերության կողմից իրականացվում են ոչ իրավաչափ գործողություններ, ինչպես նաև կիրառել Ծառայության այլ սահմանափակումներ՝ վճարային համակարգ(եր)ի կողմից Բանկին նման պահանջ ներկայացվելու դեպքում:

5.2. Առևտրի կետում քարտով կատարված զեղծարար գործարք(ներ)ի բացահայտման կամ կասկածի դեպքում Բանկն իրավասու է նախապես էլեկտրոնային նամակով տեղեկացնելով Ընկերությանը, ցանկացած պահի իր հայեցողությամբ՝ միակողմանի կասեցնել կամ դադարեցնել Ծառայության մատուցումը, ինչպես նաև ժամանակավոր կասեցնել Ընկերության հաշիվների և դրանում առկա միջոցների տնօրինման հնարավորությունը, հնարավոր վնասներից խուսափելու համար, մինչև գործարքների պարզաբանումը: Նման գործարքներից առաջացող բոլոր վնասների պատասխանատվությունը կրում է Ընկերությունը:

5.3. Ընկերությունն իրավունք ունի դադարեցնել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով Բանկին և կատարել Ծառայության հետ կապված Բանկի նկատմամբ ունեցած պարտավորություններն ամբողջությամբ: Պայմանագրի դադարեցման դեպքում Ընկերությունը պարտավոր է 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնել Բանկի կողմից տրամադրված Սարքավորումը, բացառությամբ Բանկի բջջային հավելվածը կրող այն սարքավորումների, որոնք հանձնվել են Ընկերությանը անհատույց օգտագործման իրավունքով, ինչպես նաև ապահովել ՀԴՄ սարքի գրանցումից հանումը ՀՀ պետական իրավասու մարմնի կողմից:

5.4. Ընկերության կողմից Պայմանագիրը դադարեցնելու վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Բանկը կդադարեցնի ծառայությունը: Ընկերության կողմից դիմում ներկայացնելուց մինչև ծառայության փաստացի դադարեցումն ընկած ժամանակահատվածը Բանկի և Ընկերության միջև հարաբերությունները կշարունակվեն կարգավորվել Պայմանագրով:

5.5. Բանկն իրավասու է միակողմանի դադարեցնել Պայմանագիրը, ինչպես նաև պահանջել վերադարձնել Բանկին պատկանող Սարքավորումը՝ դադարեցման մասին 5 (հինգ) աշխատանքային օր առաջ նախապես ծանուցելով Ընկերությանը, հետևյալ դեպքերում.

5.5.1. Պայմանագրի ցանկացած դրույթի խախտման դեպքում,

5.5.2. Բանկի օրինական պահանջները Հաճախորդի կողմից չկատարվելու, այդ թվում Բանկի նկատմամբ պարտավորությունները ժամանակին չվճարվելու, Բանկի կողմից պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը չտրամադրվելու դեպքում,

5.5.3. Վճարային համակարգ(եր)ի կողմից՝ Ընկերության հետ Պայմանագիրը դադարեցնելու մասին Բանկին պահանջ ներկայացվելու դեպքում,

5.5.4. Առևտրի կետի կողմից այնպիսի գործունեության իրականացման դեպքում, որը կարող է վտանգել կամ վնասել վճարային համակարգ(եր)ի բարի համբավը,

5.5.5. Պայմաններով, Սակագներով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

Ընդ որում, Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված դեպքերում Ընկերության կրած վնասների համար, իսկ Ընկերությունը պարտավոր է հատուցել Բանկին վերջինիս կողմից սույն կետում նշված դեպքերում կրած բոլոր վնասները, կորուստներն ու ծախսերը ամբողջ ծավալով:

5.6. Ծառայության դադարումը չի հանգեցնում Ընկերության՝ Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունների դադարման:

5.7. Ընկերությունը պարտավոր է Պայմանագրի դադարեցման պահից 1 (մեկ) տարվա ընթացքում նախքան Պայմանագրի դադարեցնելը Պայմանների խախտման հետևանքով Բանկին, այդ թվում՝ Բանկի բարի համբավին կամ հեղինակությանը պատճառած վնասի կամ ֆինանսական կորստի ամբողջ գումարի չափով փոխհատուցել Բանկին, ինչպես նաև փոխհատուցել նշված խախտումը վերացնելու համար Բանկի կողմից կատարված այլ ծախսերը:

6. Գաղտնիություն և տվյալների փոխանցում

6.1. Բանկն իրավունք ունի սույն Պայմանագրի գործողության ողջ ընթացքում Ընկերությունից պահանջել հավելյալ տեղեկատվություն՝ ի լրումն Բանկ ներկայացված տեղեկատվության և փաստաթղթերի: Առևտրի կետը պարտավոր է Ընկերության վերաբերյալ Բանկին տրամադրած ցանկացած տեղեկատվության փոփոխության, այդ թվում հասցեի, գործունեության վայրի և այլ անհրաժեշտ վավերապայմանների մասին անհապաղ գրավոր տեղյակ պահել Բանկին: Բանկը

պատասխանատվություն չի կրում նման տեեղեկատվության փոփոխության մասին Բանկին չտեղեկացնելու հետևանքով Ընկերությանը պատճառված վնասների համար:

6.2. Բանկն իրավունք ունի, առանց Ընկերությանը լրացուցիչ տեղեկացնելու, Ընկերության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել վճարային համակարգերին:

6.3. Հաշվի առնելով, որ VISA քարտերի սպասարկումն իրականացվում է Բանկի և «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի հետ կնքված համագործակցության պայմանագրի հիման վրա և «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն կամ VISA միջազգային վճարային համակարգը կարող են պահանջել ներկայացնել որոշակի տեղեկություններ, Հաճախորդը Բանկի գրավոր կամ բանավոր հարցման դեպքում առավելագույնը 4 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է գրավոր ներկայացնել հետևյալ տեղեկությունները՝

- Հաճախորդի կազմակերպական կառուցվածքը,
- Հաճախորդի աշխատակիցների մասին տեղեկատվություն,
- վաճառքի հետ առնչվող տեղեկատվություն,
- ֆինանսական տեղեկատվութուն Հաճախորդի վերաբերյալ,
- գործառնության մասին տեղեկատվություն
- գործարքի վերաբերյալ տեղեկատվություն, ներառյալ գործարքի անդորրագրի պատճենը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1. Առևտրի կետը պարտավորվում է Ծառայությունից օգտվել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Ընկերությունը կրում է Պայմանագրի պատշաճ կատարման ողջ պատասխանատվությունը և պարտավորվում է հատուցել դրա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով և/կամ սույն կետով/ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ, կատարված գործարքների համար Բանկին պատճառված իրական վնասը, ներառյալ՝ Բանկի նկատմամբ կիրառված տույժերը:

7.2. Ընկերությունը պարտավորվում է փոխհատուցել քարտապաններին պատճառված վնասը՝ պայմանավորված իրեն հայտնի բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների հրապարակմամբ և/կամ այլ պարտավորությունների խախտմամբ, որոնք հանգեցրել են քարտապանին բարոյական կամ նյութական վնասի պատճառմանը:

7.3. Բանկի կողմից տրամադրված Սարքավորումը վնասվելու և/կամ կորստի դեպքում Առևտրի կետը կրում է դրա նկատմամբ լրիվ գույքային պատասխանատվություն:

7.4. Առևտրի կետը սույն Պայմանների իմաստով պատասխանատու է իր աշխատակիցների բոլոր գործողությունների համար, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել սույն Պայմանների խախտման:

7.5. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում՝

7.5.1. Պայմանների խախտումով կատարված գործարքների համար:

7.5.2. ապօրինաբար գործածվող քարտերով կամ քարտային տվյալներով կատարված գործարքների համար:

7.5.3. կապի միջոցների անսարքության պատճառով վճարումների սպասարկման անհնարինության համար:

7.6. Կողմերը ժամանակավորապես ազատվում են Պայմաններով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե այդ պարտավորությունների պատշաճ կատարումն անհնար է եղել ՀՀ օրենսդրության համաձայն անհաղթահարելի ուժի հետևանքով:

8. Այլ պայմաններ

8.1. Պայմաններով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են Սակագներով, Բանկի և Ընկերության միջև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով և ՀՀ օրենսդրությամբ, իսկ ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով: Միաժամանակ բոլոր այն դեպքերում, երբ նշված իրավական ակտերում առկա չեն Կողմերի միջև ծագած իրավահարաբերությունները կարգավորող դրույթներ, ապա դրանք կարգավորվում են քարտային վճարային համակարգերի կանոններով:

8.2. Ընկերությունը հանձնարարում է Բանկին ծանուցումները տրամադրել վերջինիս Ընկերության կողմից Բանկին տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին կամ Ընկերության Մոբայլ բանկինգ համակարգում հասանելի դարձնելու միջոցով: Նշված էլեկտրոնային հաղորդակցման միջոցների բացակայության (հասցեներին

Բանկի կողմից չտիրապետելու) դեպքում Բանկը կարող է հնարավորության դեպքում ծանուցումն ուղարկել Ընկերության տրամադրած հեռախոսահամարին SMS հաղորդագրության միջոցով: Ընդ որում, մեկ եղանակով Ծանուցումն ուղարկելու դեպքում Բանկը պարտավոր չէ ծանուցում իրականացնել նաև այլ եղանակ(ներ)ով՝ անկախ այն հանգամանքից հաճախորդը Ծանուցումը ստացել է, թե՝ ոչ:

8.3. Պայմանների կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են դատական կարգով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: